



ՀԾ-ԿլիենտԲանկ

Տեղադրման ձեռնարկ

Սկզբնական պարունակությունը	2
Համակարգի պահանջները.....	3
Համակարգի տեղադրումը.....	4
Ծրագրի տեղադրումը	4
Բանկի հավաստագրի տեղադրումը	4
Համակարգի կարգավորումը.....	5
Կոնֆիգուրացիայի ստեղծումը	5
Հաճախորդի տվյալների մուտքագրումը	6
Օգտագործողների ստեղծումը.....	7
Օգտագործողի մուտքը համակարգ	8
Կապի ստուգումը	9
Բանալիների փոխանակման նշանաբանի նշանակումը.....	10
Հավաստագրի ստացումը	11
1. Բանալիների և հավաստագրի հայտի ստեղծումը.....	11
2. Հավաստագրի հայտի ուղարկումը բանկ.....	12
3. Հավաստագրի հայտի վիճակի ստուգումը.....	13
Օգտագործողի մուտքը հավաստագրի ստանալուց հետո	14

Սկավառակի պարունակությունը

Սկավառակը պարունակում է՝

1. Համակարգի տեղադրման փաթեթը (գտնվում է Setup գրադարանում),
2. Բանկի հավաստագրի ֆայլ (այս ֆայլը ունի cer ընդլայնում),
3. Սկզբնական տվյալների ֆայլ (“CBInit.txt”)
4. Տեղադրման ձեռնարկ

Համակարգի պահանջները

ՀՕ-ԿլիենտԲանկ համակարգը օգտագործում է գաղտնագրման գրադարան, որը հասանելի է Internet Explorer ծրագրի 5.5 և բարձր տարբերակների դեպքում: Տեղադրման ընթացքում ստուգվում է Internet Explorer ծրագրի տարբերակը և անհամապատասխանության դեպքում առաջարկվում է տեղադրել անհրաժեշտը:

ՀՕ-ԿլիենտԲանկ համակարգի այլ նվազագույն պահանջներն են՝

1. Pentium 200 MHz, 64 Mb RAM
2. Օպերացիոն համակարգ՝
 - Microsoft Windows XP
 - Microsoft Windows 2000 Service Pack 1
 - Microsoft Windows NT4.0 Service Pack 6
 - Microsoft Windows 98
 - Microsoft Windows Millennium Edition.
3. Բանկի Web-սերվերի հետ կապի միջոց: Կախված, թե ինչպես է բանկը տրամադրում այս ծառայությունը դա կարող է լինել մոդեմ կամ Ինտրնետ կապ.




Ուշադրություն՝ ՀՕ-ԿլիենտԲանկ համակարգը ավտոմատ փոխում է “Regional and Language Options”-ի հետևյալ արժեքները՝

1. Ամսաթվի անջատիչ (Date separator)՝ “/”
2. Ամսաթվի կարճ ֆորմատ (Short date format)՝ “dd/MM/yy”
3. Ամբողջ և կոտորակային մասերի անջատիչ (Decimal symbol)՝ “.” (կետ)
4. Կարգերի խմբավորման նշան (Digit grouping symbol)՝ “,” (ստորակետ)

Համակարգի տեղադրումը

Ծրագրի տեղադրումը


Ծրագրի տեղադրման համար անհրաժեշտ է աշխատացնել setup.exe (գտնվում է սկավառակի Setup գրադարանում) և հետևել տեղադրման ուղորդիչի հրամաններին:




Բանկի հավաստագրի տեղադրումը

Բանկի հավաստագիրը տեղադրելու համար՝

1. Գտեք և բացեք հավաստագրի ֆայլը (cer ընդլայնումով ֆայլը): Արդյունքում կարտապատկերվի սխալ հավաստագրի պատուհանը: Սեղմեք “Install Certificate” կոճակը և հետևեք բացված “Certificate Import Wizard” ուղորդիչի հրամաններին (միշտ սեղմեք “Next”).



2. Հաստատեք “Certificate Import Wizard” աշխատանքի ավարտը: Այժմ, բանկի հավաստագիրը բացելուց կարտապատկերվի ճիշտ հավաստագրի պատուհանը:







Համակարգի կարգավորումը

Կոնֆիգուրացիայի ստեղծումը

Առաջին անգամ աշխատացնելուց համակարգը առաջարկում է ստեղծել նոր կոնֆիգուրացիա: Կոնֆիգուրացիայի ստեղծումը կատարվում է “Configuration Wizard” ուղղորդիչի օգնությամբ և բաղկացած է հետևյալ քայլերից՝

1. Մտտքագրեք կոնֆիգուրացիայի անվանումը և նկարագրությունը: Այս դաշտերը տեղեկատվական բնույթի են, որտեղ սովորաբար լրացվում են կազմակերպության և բանկի անվանումները: Սեղմեք “Հաջորդ/Next” կոճակը հաջորդ քայլին անցնելու համար:
2. Նշեք, արդյոք անհրաժեշտ է ստեղծել նոր տվյալների պահոց, թե օգտագործել արդեն ստեղծվածը: Վերջինս օգտագործվում է համակարգի ցանցային շահագործման դեպքում: Այսինքն, առաջին աշխատակայանից պետք է ստեղծել տվյալների պահոց, իսկ մնացած աշխատակայաններից՝ օգտագործել ստեղծվածը: Սեղմեք “Հաջորդ/Next” կոճակը հաջորդ քայլին անցնելու համար: Նոր պահոցի ստեղծման դեպքում կատարվում է 3-րդ քայլը, իսկ օգտագործման դեպքում՝ 4-րդը:
3. Նոր պահոցի ստեղծման դեպքում, նշեք սկզբնական տվյալներով “CBInit.txt” ֆայլի ճանապարհը և ստեղծվող պահոցի ճանապարհը: Սեղմեք “Ավարտել/Finish” կոճակը ավարտելու համար:
4. Գոյություն ունեցող պահոցի օգտագործման դեպքում, նշեք այդ պահոցի ֆայլի ճանապարհը: Սեղմեք “Ավարտել/Finish” կոճակը ավարտելու համար:




Հաճախորդի տվյալների մուտքագրումը

Նոր կոնֆիգուրացիա ստեղծելուց ստեղծվում է նաև ադմինիստրատորի իրավասություններով օգտագործող: Այդ օգտագործողի անունը “ADMIN” է, իսկ նշանաբանը՝ դատարկ: Համակարգ մտնելու համարը սեղմեք “Կատարել/OK”:





Հաճախորդի տվյալները օգտագործվում են համակարգի կողմից որոշ փաստաթղթերի դաշտերը ավտոմատ լրացնելու համար (օրինակ՝ Վճարման հանձնարարագրի վճարողի տվյալները), օգտագործողին ազատելով նույն տվյալները բազմաթիվ անգամ մուտքագրելուց: Դրա համար խորհուրդ է տրվում առաջին մուտքից հետո լրացնել այդ տվյալները:

Հաճախորդի տվյալները լրացնելու համար ընտրեք “Աշխատանք/Session” ցանկի “Դրույթներ/Options” կետը, կամ սեղմեք “Ctrl+O”.




Արտապատկերված “Ընթացիկ դրույթներ/Current Options” պատուհանում ընտրեք “Հաճախորդի ռեկվիզիտներ/Client Properties” էջը և մուտքագրեք հաճախորդի տվյալները: “Ընթացիկ դրույթներ/Current Options” պատուհանը օգտագործվում է համակարգի պարամետրերը կարգավորելու համար: Օրինակ՝ լրությամբ վճարման հանձնարարագրերում առաջարկվող հաշիվը (“Հաշվարկային հաշիվը բանկում/Settlement Account” դաշտը “Ընդհանուր/General” էջում), լեզուն (“Աշխատանքային լեզու/Working Language” դաշտը “Ընդհանուր/General” էջում) և այլն:




Սեղմեք “Կատարել/OK” փոփոխությունները հիշելու համար: Եթե դաշտերից մեկի արժեքը սխալ է լրացված, համակարգը կարտապատկերի սխալի մասին հաղորդագրություն:

Օգտագործողների ստեղծումը


Համակարգը կարող է շահագործվել մեկ կամ մի քանի օգտագործողների կողմից: Դրա համար անհրաժեշտ է ստեղծել համակարգի օգտագործողներին: Յուրաքանչյուր օգտագործող կարող է ունենալ իր իրավասությունները, օրինակ՝ առաջին ստորագրության, երկրորդ ստորագրության և այլն: Խորհուրդ է տրվում ստեղծել մեկ օգտագործող ադմինիստրատորի իրավասություններով, իսկ “ADMIN” օգտագործողի մուտքը համակարգ արգելել: Օգտագործողներին ստեղծելու համար ընտրեք “Աշխատանք/Session” ցանկի “Ադմինիստրատորի գործիքներ/Administrator Tools” ենթացանկի “Օգտագործողներ/Users” կետը:




Բացված “Օգտագործողներ/Users” պատուհանում արտապատկերվում է համակարգի բոլոր օգտագործողների ցուցակը: Նոր օգտագործող ստեղծելու համար ընտրեք մկնիկի աջ ստեղնի միջոցով բացվող կոնտեքստային ցանկի “Ավելացնել/New” կետը (կամ “Գործողություններ/Action” ցանկի “Ավելացնել/New” կետը):



Համակարգը կարտապատկերի “Օգտագործող (Նոր)/User (New)” պատուհանը: Մուտքագրեք օգտագործողի տվյալները, նշեք իրավասությունները (օրինակ՝ ադմինիստրատոր, առաջին ստորագրության, երկրորդ ստորագրության իրավասությունները և այլն), իսկ “Հաշիվներ/Accounts” էջում նշեք օգտագործողին հասանելի հաշիվները: Սեղմեք “Կատարել/OK” օգտագործողին հիշելու համար:



Այն օգտագործողների համար, որոնք ունեն «Առաջին ստորագրության իրավունք/Has a First Signature Right», «Երկրորդ ստորագրության իրավունք/Has a Second Signature Right» կամ «Կարող է ուղարկել բանկ/ստանալ բանկից/Can Send To/Receive From Bank» իրավասություններից մեկը, օգտագործողի նկարագրությունը օգտագործվում է որպես հավաստագրի (բանալու) անվանում: Հետևաբար, «Օգտագործողի նկարագրություն/User Description» դաշտում անհրաժեշտ է լրացնել օգտագործողի լրիվ անունը (անունը և ազգանունը):



Ուշադրություն՝ Առաջին և/կամ երկրորդ ստորագրության իրավունք ունեցող օգտագործողների լրիվ անունները պետք է համաձայնեցվեն բանկի հետ: Բանկը կընդունի հաճախորդի էլեկտրոնային փաստաթուղթը միայն այն դեպքում, եթե առաջին և երկրորդ ստորագրությունները դրված են համաձայնեցված օգտագործողների կողմից:

Օգտագործողի մուտքը համակարգ

Այժմ, յուրաքանչյուր օգտագործող կարող է մուտք լինել համակարգ, օգտագործելով սկզբնական նշանաբանը:




Եթե օգտագործողը ունի առաջին ստորագրության, երկրորդ ստորագրության կամ բանկ ուղարկել/ստանալու իրավասություններից որևէ մեկը, ապա, հաջող մուտքի դեպքում, օգտագործողը կստանա գաղտնի բանալիների բացակայության մասին հաղորդագրություն: Վերը նշված իրավասություններից յուրաքանչյուրը պահանջում է, որպեսզի օգտագործողը ունենա բանկի կողմից հաստատված գաղտնի բանալիով հավաստագիր:




Ինչպես ստեղծել գաղտնի բանալի, ուղարկել հավաստագրի հայտը բանկ և ստանալ հավաստագիր նկարագրված է «Հավաստագրի ստացում» թեմայում:

Հաջող մուտքից հետո օգտագործողը կարող է փոխել նշանաբանը: Նշանաբանը փոխելու համար ընտրեք «Աշխատանք/Session» ցանկի «Փոխել նշանաբանը/Change Password» կետը:




Արտապատկերված պատուհանում մուտքագրեք ընթացիկ նշանաբանը, նոր նշանաբանը և հաստատեք նոր նշանաբանը: Նոր նշանաբանը հիշելու համար սեղմեք “Կատարել/OK”:





Կապի ստուգումը

Բանկի հետ կապի առկայությունը ստուգելու համար ընտրեք “Աշխատանք/Session” ցանկի “Դրույթներ/Options” կետը:



Արտապատկերված “Ընթացիկ դրույթներ/Current Options” պատուհանում ընտրեք “Կապ/Connection Settings” էջը և սեղմեք “Ստուգել կապը/Test Connection” կոճակը: Եթե կապը բանկի հետ առկա է, ապա ստուգումը բարեհաջող կավարտվի:




Եթե ստուգումը ձախողվում է, ապա հնարավոր պատճառներ կարող են լինել՝


- Բացակայում է ինտերնետ-կապը,
- Առկա է Proxy սերվեր, որի սվյալները մուտքագրված չեն համակարգում,
- Տեղադրված չէ բանկի հավաստագիրը

Բանալիների փոխանակման նշանաբանի նշանակումը

Մինչ օգտագործողները կկարողանան ուղարկել հավաստագրերի հայտերը (բաց բանալիները) բանկ, համակարգի ադմինիստրատորը պետք է նշանակի բանալիների փոխանակման նշանաբանը: Բանալիների փոխանակման նշանաբանը նշանակելու համար ընտրեք “Աշխատանք/Session” ցանկի “Դրույթներ/Options” կետը: Արտապատկերված “Ընթացիկ դրույթներ/Current Options” պատուհանում ընտրեք “Գաղտնի բանալիներ/Private Keys” էջը և սեղմեք “Փոխել/ Change” կոճակը:



Ցույց տրված պատուհանում մուտքագրեք բանալիների փոխանակման նշանաբանը, հաստատեք այն և սեղմեք “Կատարել/OK” փոփոխությունները հիշելու համար:



Բանալիների փոխանակման նշանաբանը չի պահվում որևէ մի տեղ և, մոռանալու դեպքում, այն հնարավոր չէ վերականգնել. Այդ պատճառով համակարգի ադմինիստրատորը պետք է հիշի նշանակված նշանաբանը: Այդ նշանաբանը կօգտագործվի ամեն անգամ (առնվազն տարին մեկ անգամ) բանալիները փոխելիս, այսինքն հավաստագրի հայտը (բաց բանալին)

բանկ ուղարկելիս և համապատասխան հավաստագիրը (հաստատված բաց բանալին) ստանալիս:

Բանալիների փոխանակման նշանաբանի հիման վրա համակարգը գեներացնում է *բանալիների փոխանակման կոդ*, որը արտապատկերվում է “Ընթացիկ դրույթներ/Curent Options” պատուհանի “Գաղտնի բանալիներ/Private Keys” էջի “Բանալիների փոխանակման կոդ/ Keys Exchange Code” դաշտում:

Բանալիների փոխանակման կոդը դա 32 տառաթվային նիշերի հաջորդականություն է, որը ստացվում է *բանալիների փոխանակման նշանաբանից* հատուկ ձևափոխությունների միջոցով (MD5-hash ալգորիթմով), ընդ որում ունենալով կոդը հնարավոր չէ վերականգնել նախնական նշանաբանը:



Ուշադրություն՝ Բանալիների փոխանակման նշանաբանը նշանակելուց հետո գեներացված բանալիների փոխանակման կոդը պետք է համաձայնեցնել բանկի հետ: Հավաստագրի հայտը կընդունվի բանկի կողմից միայն այն դեպքում, եթե բանալիների փոխանակման կոդը համաձայնեցված է բանկի հետ:

Հավաստագրի ստացումը

Բանկ հարցումներ ուղարկելու և/կամ փաստաթղթերի վրա էլեկտրոնային ստորագրություն դնելու համար օգտագործողը պետք է ունենա գաղտնի բանալիով հավաստագիր: Այդ հավաստագրի միջոցով բանկը նույնացնում է օգտագործողին: Այդ պատճառով յուրաքանչյուր վերը նշված իրավասություններով օժտված օգտագործող պետք է ստեղծի բանալիների զույգ (գաղտնի և բաց) և ուղարկի հավաստագրի հայտը (աց բանալին) բանկ: Հավաստագրի հայտի հիման վրա բանկը ստեղծում է օգտագործողի համար հավաստագիր (հաստատված բաց բանալի): Միայն հավաստագիրը ստանալուց հետո օգտագործողը կարող է ուղարկել հարցումներ բանկ և/կամ դնել էլեկտրոնային ստորագրություն:

Հավաստագիր ստանալու համար օգտագործողը պետք է

1. ստեղծի բանալիների զույգը (գաղտնի և բաց), որի ժամանակ ստեղծվում է նաև հավաստագրի հայտը,
2. Ուղարկի հավաստագրի հայտը (բաց բանալին) բանկ,
3. Մտանա հավաստագիրը (հաստատված բաց բանալին).


1. Բանալիների և հավաստագրի հայտի ստեղծումը

Բանալիների զույգը ստեղծելու համար անհրաժեշտ է կատարել հետևյալ քայլերը՝

1. Ընտրեք “Տեղեկատուներ/Data Directories” ցանկի “Բանալիներ/Keys” կետը





2. Բացված “Բանալիներ/ Keys” պատուհանում արտապատկերվում է բոլոր բանալիների ցուցակը: Բանալիները ստեղծելու համար ընտրեք մկնիկի աջ ստեղնի միջոցով բացվող կոնտեքստային ցանկի “Ավելացնել/New” կետը (կամ “Գործողություններ/Action” ցանկի “Ավելացնել/New” կետը) և հաստատեք ստեղծումը:



Բարեհաջող ավարտի դեպքում համակարգը կարտապատկերի հաղորդագրություն, իսկ բանալիների ցուցակում կավելանա համապատասխան տողը “Ստեղծված է/Created” վիճակով: Բանալու վիճակը երևում է “Բանալիներ/Keys” ցուցակի “Վիճակ/State” սյունում:




Նոր ստեղծված բանալին դիտելու համար ընտրեք կոնտեքստային ցանկի “Դիտել/View” կետը: Արդյունքում կարտապատկերվի սխալ հավաստագրի պատուհանը:




2. Հավաստագրի հայտի ուղարկումը բանկ

Բանալիները ստեղծելուց հետո, օգտագործողը դեռ չի կարող դնել էլեկտրոնային ստորագրություններ և/կամ ուղարկել/ստանալ բանկին: Անհրաժեշտ է ուղարկել հավաստագրի հայտը (բաց բանալին) բանկ հետագա հաստատման համար: Հավաստագրի հայտը բանկ ուղարկելու համար՝


1. Ընտրեք “Տեղեկատուներ/Data Directories” ցանկի “Բանալիներ/Keys” կետը
2. Բացված “Բանալիներ/Keys” ցուցակում նշեք (“Insert” ստեղծված միջոցով) այն հավաստագրերի հայտերը, որոնք պետք է ուղարկել բանկ:
3. Ցուցակի կոնտեքստային ցանկից ընտրեք “Ուղարկել բանկ/Send to Bank” կետը:



4. Արտապատկերված պատուհանում մուտքագրեք բանալիների փոխանակման նշանաբանը:



5. Նշանաբանը ճիշտ մուտքագրելու դեպքում նշված հավաստագրերի հայտերը կուղարկվեն բանկ:




Հավաստագրերի ցուցակում բանկ ուղարկված հավաստագրի հայտի վիճակը փոխվում է “Ուղարկված է բանկ/Sent to Bank” (“Վիճակ/State” սյան արժեքը):


3. Հավաստագրի հայտի վիճակի ստուգումը

Բանկ ուղարկված հավաստագրի հայտի վիճակը ճշտելու համար՝


6. Ընտրեք “Տեղեկատուներ/Data Directories” ցանկի “Բանալիներ/Keys” կետը
7. Բացված “Բանալիներ/Keys” ցուցակում նշեք (“Insert” ստեղծի միջոցով) այն հավաստագրերի հայտերը, որոնք պետք է ուղարկել բանկ:
1. Ցուցակի կոնտեքստային ցանկից ընտրեք “Ստուգել բանալիների վիճակը/Check Key State” կետը:




2. Արտապատկերված պատուհանում մուտքագրեք բանալիների փոխանակման նշանաբանը:
3. Նշանաբանը ճիշտ մուտքագրելու դեպքում նշված հավաստագրերի հայտերի վիճակները կճշգրտվեն: Իսկ եթե բանկը հաստատել է հայտը, ապա համապատասխան հավաստագիրը կստացվի:





Հավաստագրերի ցուցակում բանկի կողմից հաստատված կամ մերժված հավաստագրի հայտի վիճակը փոխվում է համապատասխանաբար “Հաստատված է/Confirmed” կամ “Մերժված է/Refused” (“Վիճակ/State” սյան արժեքը): Եթե հավաստագրի հայտը հաստատված է բանկի կողմից, ապա “Ուժի մեջ մտնելու ամսաթիվ/ Valid From” և “Ուժը կորցնելու ամսաթիվ/ Valid To” սյուններում լրացվում է այն ժամանակահատվածը, որի ընթացքում հավաստագիրը համարվում է պիտանի ստորագրություններ դնելու և բանկի հետ տվյալներ փոխանակելու համար:

 **Ուշադրություն՝** Հավաստագիրը պիտանի է մեկ տարվա ընթացքում սկսած հաստատման պահից: Ուժը կորցնելու դեպքում անհրաժեշտ է կատարել “Հավաստագրի ստացումը” թեմայում նկարագրված քայլերը:

 **Ուշադրություն՝** Հավաստագրի հայտը բանկ ուղարկելուց հետո, նրա մատնահետքը (thumbprint) անհրաժեշտ է համաձայնեցնել բանկի հետ: Հավաստագիրը կստեղծվի միայն այն դեպքում, եթե հավաստագրի հայտի մատնահետքը համաձայնեցվել է բանկի հետ.
Հավաստագրի հայտի մատնահետքը երևում է “Տեղեկատուներ/Data Directories” ցանկի “Բանալիներ/Keys” կետով բացվող ցուցակի “Բանալու մատնահետք/Key Thumbprint” սյունում:


Հաստատված հավաստագիրը դիտելու համար ընտրեք կոնսոլեքստային ցանկի “Դիտել/View” կետը: Արդյունքում կարտապատկերվի պիտանի հավաստագրի պատուհանը:



Օգտագործողի մուտքը հավաստագիրը ստանալուց հետո

Լռությամբ, հավաստագիրը և համապատասխան գաղտնի բանալին պահվում են օպերացիոն համակարգի հավաստագրերի պահոցում: Գաղտնի բանալիների պահոցը փոխելու համար

օգտագործվում է “Ընթացիկ դրույթներ/Current Options” պատուհանի “Գաղտնի բանալիներ/Private Keys” էջը:



“Պահել գաղտնի բանալիները ֆայլում/Store Private Keys In File” դրույթը նշելու դեպքում գաղտնի բանալիով հավաստագիրը կպահպանվի նշված ճանապարհում: Հաջորդ մուտքի ժամանակ բանալին ֆայլում հիշելուց առաջ համակարգը կզգուշացնի օգտատագործողին:



Եթե նշված ճանապարհը գտնվում է արտաքին կրիչի վրա, ապա համակարգը կառաջարկի նաև տեղադրել կրիչը: